ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Ի ՓԱՐԻԶ[1]

ԳՈՆՏԷԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՄԷՋ[2]

(ՀԻՆ ՇՐՋԱՆ. 1846–1870)

Բ[բ]

ՏԵՍՈՒՉ — **Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ[3]**

Շար. 1846 ՀՈԿՏԵՄԲԵՐ 25 — 1855 ՄԱՅԻՍ 14

ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐ — *Հ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՈՐԿՈՒՃԵԱՆ՝ 1846 հոկտեմբեր 25 – 1848 յուլիս 16։*

ՈՒՍՈՒՄՆԱՊԵՏ — *Հ. ՍՏԵՓԱՆ ԵԱԶԸՃԵԱՆ (և «դաստիարակ մանկաւոյն»)՝ 1846–1848 յուլիս 16։ – Հ. ԳԱԲՐԻԷԼ ԱՃՎԱԶՈՎՍՔԻ («և դաստիարակ»)՝ 1848 յուլիս 16 – 1855։*

ՄԱՏԱԿԱՐԱՐ — *Հ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՈՐԿՈՒՃԵԱՆ 1846 հոկտեմբեր 25 – 1848 յուլիս 16[4]։ – Նոյնը («գործակալ իրաց վանացս»)՝ 1848–1850։*

ՈՒՍՈՒՑԻՉ — *Հ. ՍՏԵՓԱՆ ԵԱԶԸՃԵԱՆ («վարժապետ»)՝ շար. յ1848 յուլիս 16։ – Հ. ՏԻՄՈԹԷՈՍ ԹՆԿԸՐԵԱՆ՝ 1846 նոյեմբեր 21[5] – 1848 յուլիս 16։ – Հ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ԳԱԼՖԱՅԵԱՆ՝ 1848 յուլիս 16 – 1855։ – Հ. ՊԵՏՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ՝ 1854 օգոստոս 12 – 1854 նոյեմբեր 9։ – Հ. ՎԱՐԴԱՆ ՇԻՇՄԱՆԵԱՆ (և «հսկող)՝ 1855 մայիս 14 – 1857 օգոստոս 12։*

ԱՇԽ. ԵՂԲԱՅՐ — *ԵՂ. ՍՏԵՓԱՆՈՍ ՈՒՄՈՒՏԵԱՆ՝ շար. յ1856 դեկտեմբեր։ – ԵՂ. ՕԳՈՍՏԻՆՈՍ ԾԻԱՆԻ՝ 1856 դեկտեմբեր – 1857 յունուար 7։*

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1. *Փատուայի Մուրատեան Վարժ.ի փոխադրութեան գաղափարը պաշտօնապէս կը ծանուցուի առաջին անգամ 1843 փետր. 6ին գումարուած Ս. Ղազարու Վանական ժողովին մէջ. Ատենադպիրը կը գրէ. «Ի վանական ժողովի միաբան քուէարկութեամբ» կը նախընտրեն «փոխադրել զվարժարան Մուրատ ի տէրութենէն Աւստրիոյ, քան եթէ տալ զհաշիւ համարոյ մատակարարութեան վարժարանին, զոր պահանջէր տէրութիւնն, և կորուսանել զազատութիւն մեր՝ զոր կատկողն ինքնին տուեալ էր Միաբանութեանս»։ Նոյն տարին իսկ (1843 Յուլիս 5) աննպաստ պատասխան կու գայ Վիեննայէն, ուստի Հ. Սարգիս և Հ. Յովհաննէս Սորկուճեան Միլան կը վազեն փոխարքային պատմելու «զանցս կայսերական վճռոյն ձախողակ», միեւնոյն ատեն յայտնելու Միաբանութեանս փափագը՝ թէ Լոնտրա փոխադրել կ'ուզէ զՄուրատեան Վարժարանը («Անցք օրականք»)։*

Լոնտրայի անունը թերեւս աւելի արդիւնք էր մերթ ընդ մերթ մէջտեղ նոր առաջարկի մը երեւնալուն, ինչ որ օրուան ծանր կացութիւնն ինքնին ստեղծած էր։ Այս տեսակէտով կը յիշուի նաեւ Անգղ. Հիւպատոսի մը գիրը, թէ ի հարկին կարելի է Մուրատեան դպրոցը Եօնիական կղզին փոխադրել («Անցք օրականք», 1844 փետր. 1)։ Կը պատմուի նոյն իսկ Լուքքայի Դուքսին Ս. Ղազարու տուած այցելութենէն հետաքրքրական դրուագ մը, որ կը պատահի